



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ. փոստ kotayk@mta.gov.am

N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանրապետության, և մասնավորապես, Կոտայքի մարզի սիրելի՛ զորակոչիկներ,

Մեկնարկում է 2020 թվականի ամառային զորակոչը:

Այսօրվանից դուք ստանձնում եք նոր պարտավորություն՝ միտված հայկական մեր երկու պետությունների սահմանների պաշտպանությանն ու անվտանգության ապահովմանը:

Ամուր պետության հիմնաքարը հզոր բանակն է, իսկ հզոր բանակի անփոխարինելի հենասյունը դուք եք և ձեր ընկերները:

Սիրելիներս,

Այսօր կյանքի նոր շրջափուլ եք մտնում, որն, անշուշտ, ձեզ համար անձանոթ է և բացահայտումներով ու փորձություններով լի:

Անկեղծորեն ցանկանում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը Ազգային Բանակ մեկնի հենց այս գիտակցումով:

Իր մեջքն ուղղած մեր պետությունն այսօր անում է առավելագույնը՝ մարտունակ բանակ ունենալու և ձեր ծառայության համար առավել բարենպաստ ու անվտանգ միջավայր երաշխավորելու համար: Մեր սահմանների ամրությունն այսօրվանից նաև ձեր ձեռքերում է:

Նոր փորձություններով, հետաքրքրություններով և ձեռքբերումներով լի երկու տարիների ընթացքում երբեք չկորցնեք զգոնությունը, շրջահայացությունը, ընկերասիրությունը և բոլոր իրավիճակներում գործեք իբրև իր պարտականությանը գիտակից, արի և վեհանձն ՄԱՐԴ:

Իմացե՛ք, որ ձեր թիկունքին Հայաստանի Հանրապետությունն է, իսկ մեր պետության անվտանգության և մեր սահմանների անառիկության առաջին երաշխավորը դուք եք:

Եվս մեկ անգամ շնորհավորելով ամառային զորակոչի մեկնարկի առթիվ՝ խաղաղ ու անփորձանք ծառայություն եմ մաղթում ձեզ բոլորիդ. իսկ ձեր ծնողներին ու հարազատներին՝ հպարտության զգացումի հետ մեկտեղված՝ համբերություն և հարգանքներիս հավաստի՛քը:

Շնորհակալություն

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ